ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԹԱԹՈՒԼ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.** Թաթուլ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** 16.11.2019թ. մինչև 19.11.2019թ. ժամանակահատվածը գործուղվել եմ Ավստրիայի Հանրապետության Ֆորարլբերգ նահանգի Մոնտաֆոն խոշորացված համայնք:

4. **Հրավիրող կողմը.** Հրավերը ստացել եմ Ավստրիայի Հանրապետության Ֆորարլբերգ նահանգի Մոնտաֆոն խոշորացված համայնքի ղեկավար՝ Մարկուս Շվարցվերլի կողմից:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).** Գործուղման նպատակն էր՝ ինստիտուցիոնալ հնարավորություններ ստեղծել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում գյուղատնտեսության բնագավառում ներգրավված և գործունեություն իրականացնող ֆիզիկական, իրավաբանական անձանց ու կազմակերպություններին արհեստավարժ մասնագետների նկատմամբ ձևավորված և օրեցօր աճող պահանջարկի լուծման համար: Այս նպատակի իրագործման համար գործուղվել եմ Ավստրիայի Հանրապետության Ֆորալբերգ նահանգի ավելի քան 40 տարվա փորձ ունեցող և տարածաշրջանում լավագույններից մեկը համարվող BSBZ ավստրիական գյուղատնտեսական քոլեջ՝ ծանոթանալու հաստատության տնօրինության հետ, հասկանալու աշխատանքային և ուսումնական գործընթացները, սկսելու ավելի առարկայական քննարկումներ քոլեջի անալոգը Տավուշի մարզում ունենալու հեռանկարի շուրջ:

Այցելության նպատակներից էր նաև մոտիկից ուսումնասիրել ավստրիական գյուղատնտեսական ընկերությունների և ձեռնարկությունների, ֆերմաների և ընտանեկան բիզնեսների կառավարման մեթոդներին ու հմտություններին, ինչպես նաև նպաստել հայ-ավստրիական համայնքային զարգացման ակտիվ կապերի կայացմանը:

6. **Քննարկված թեմաները.** BSBZ գյուղատնտեսական քոլեջի տնօրինության հետ քննարկվել են ուսումնական հաստատության գիտական և գործնական կարողությունները ՀՀ Տավուշի մարզի շահագրգիռ անձանց հասանելի դարձնելու հարցերը:

Ավստրիայի Հանրապետության Ֆորարլբերգ նահանգի Մոնտաֆոն խոշորացված համայնքի ղեկավարի հետ քննարկվել են միջհամայնքային համագործակցությանը վերաբերող հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** Գործուղման առաջին օրը՝ երեկոյան, համայնքի ղեկավարը մեր պատվիրակության անդամներին ու այցելության նպատակները ներկայացրեց Մոնտաֆոն խոշորացված համայնքի պոլիտեխնիկական քոլեջի դահլիճում կազմակերպված մշակութային միջոցառման մասնակիցներին:

Վերը նշված համայնքի ղեկավարի մասնակցությամբ հանդիպումներ են կազմակերպվել նաև տեղի ֆերմերային տնտեսություններում, գյուղատնտեսական մթերքի և հումքի վերամշակման արտադրամասերում, որտեղ մանրամասն ծանոթացել ենք ավստրիական ֆերմերային կյանքի կառավարման առանձնահատկություններին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, բայց պայմանավորվածություններ են ձեռք բերվել BSBZ գյուղատնտեսական քոլեջի տնօրինության հետ հետագա համագործակցության կայացման, ՀՀ Տավուշի մարզում անալոգային <<Հայ-ավստրահական>> քոլեջ ունենալու հեռանկարի շուրջ: Նախնական փոխադարձ բանավոր պայմանավորվածություն ենք ձեռք բերել. գործնական քայլեր ձեռնարկել գաղափարը կյանքի կոչելու նպատակով:

Մոնտաֆոն խոշորացված համայնքի ղեկավարի հետ կայացած հանդիպումների արդյուքնում պայմանավորվածություն է ձեռք բերվել ֆերմերային գործունեության կառավարման ավստրիական փորձը ՀՀ Տավուշի մարզում գործնականում ցուցադրելու, ինչպես նաև <<Հայ-ավստրահական>> քոլեջին անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու հարցերի շուրջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Տավուշի մարզի զարգացման պատասխանատուները կարևորում են Ավստրիայի Հանրապետության գյուղատնտեսական փորձի ուսումնասիրումը և Հայաստանում դրա կիրառումը, ինչպես նաև վստահ են, որ այդ փորձը կօգնի նպաստել մարզում գյուղատնտեսական պատշաճ մշակույթի ամրապնդմանն ու բնագավառի զարգացմանը:

Ավստրիայի Հանրապետության Մոնտաֆոն խոշորացված համայնք կատարած այցի արդյունքները կապիտալիզացնելու նպատակով ՀՀ Տավուշի մարզի զարգացման պատասխանատուները առաջիկայում ակտիվ հանդիպումներ կունենան ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնատար անձանց հետ, համատեղ կմշակվեն հետագա անելիքների և գործողությունների քարտեզ, կսահմանվեն պատասխանատուներ:

Հայաստանի Հանրապետության

Տավուշի մարզպետի տեղակալ՝ Թաթուլ Ստեփանյան

22.11.2019թ.